



# Ա Ր Ա Ր Ա Տ

Թ Ի Ի Ը.—Շ Ր Զ Ա Ն Ի Գ. 1891 Տ Ա Ր Ի Ի Գ. Օ Գ Ո Ս Տ Ո Ս

## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔԸ

**ՊԱՏԱՍԻԱՆ Է՝ ՌԷՆԱՆԻՆ ԵՒ Լ՝ ՏՕԼՍՏՅՈՅԻՆ**

**ԲԵՐՍԵԷՔ ԶԱՐՈՋՆԵՐԷՑ**

(Վ. Ե Ր Զ):

Դ.

Բայց Յիսուս Գրիստոս ոչ միայն խօսքով հաստատում է իւր կրքո-  
նական արքայական իշխանութիւնն, այլ աւելի ևս գործերով—  
փառսերով: Նա նոյնքան էլ գործում է, որքան և ուսուցանում

և թէ վարդապետութեան, թէ գործերի մէջ ցոյց է տալիս ինքնակալ զօրութիւն, որ պէտք է անուանել իրան վայելուչ միակ շէշման խօսքով: Այստեղ մենք հանդիպում ենք ժամանակակից և կիզիչ խնդիրն: Արքան նա այժմ հերքուում է, այնքան ես իմ մէջս պարտք եմ զգում զգուշութեամբ և առանց յապաղման զննել այս խնդիրը: Ար Յիսուս Քրիստոս յայտնեց գերբնական իշխանութեան իւր իրաւունքը, այդ երևում է աւետարանի մէջ առաջ բերած բոլոր օրինակներից առանց բացառութեան և ես կարիք չունիմ մատնանիշ լինելու գորա վերայ:

Այդ հաստատում են ոչ միայն Ս. Պօղոսի թղթերն, այլ և ամենահին և իսկական վկայագրերն, որոնց մէջ ամենանախապաշարեալ քրիստոնէիներն էլ պարտաւորուում է ճանաչելու Նորա ծառայութեան արձագանքը: Ընդունենք, որ Ս. Մարկոսի պատմածները, ինչպէս այժմ շատերը կարծում են, կազմում են այնպիսի պատմութիւն, որ կարելի է նախասկզբնական աւետարան կոչել—բոլոր աշխարհ ընդունում է, որ նա սկզբից մինչև վերջը պատմում է Յիսուսի Քրիստոսի հրաշալի գործունէութիւնը: Անտարակոյս մեզ կասեն, որ բոլոր այդ հրաշալի գծերը հրէից ազգային երևակայութեան ազատ մտայածին գործեր են, երևակայութեան, որ չէր կարող իրան ներկայացնել մի կրօնական գիւցազն առանց հրաշագործի լուսեղէն պսակի: Բայց մի իրողութիւն բոլորովին հերքում է այդ կարծիքի հաստատութիւնն և ցոյց է տալիս, որ աւետարանիչները գիտէին յաւիշտակութեան չենթարկուել:

Մեր քրիստոնէական թուականի առաջին դարում ապրում էր մարգարէ, որ մեծ ժողովրդականութիւն ունէր—մի մարգ, որոյ նշանակութիւնն այնպիսի էր, որ պատմաբան Յովսէփն, որ կարծես Քրիստոսին բնաւ չէր ճանաչում, տուեց նրան մեծ կշիռ՝ այս մարգը Յովհաննէս Վկրտիչն էր, որին պատուում էին և պաշտում միակերպ թէ հրէայք և թէ քրիստոնեայք. բայց մենք չենք տեսնում, որ աւետարանները նրան հրաշագործական զօրութիւն յատկացնելիս լինէին. նոքա որոշ և ազգու կերպով նկարագրեցին նորա պաշտօնը, քարոզութիւնը, մահն, առանց առաջ բերելու որ և է գերբնական գիծ, որ ցոյց է տալիս թէ նոքա կարողանում էին ճանաչել

ու հասկանալ անտարակուսելի աստուածային առաքելութիւնն և՛ առանց հրաշագործութեան: Գործը բոլորովին այլ կերպարանք է առնում: Երբ աւետարանիչք խօսում են Քրիստոսի մասին—նոցա աւետարանների իւրաքանչիւր էջում մենք հանդիպում ենք գործերի, որոնք միայն գերբնական զօրութեան արգիւնք են: Կասե՞ն արդեօք, որ նոցա ոճը փոփոխական է, որ նոցա պատմութիւնները պակաս ճիշդ են երևում, աւելի մոլթ և վիպական են և քիչ է երեւում հեռք վկաների, որոնք տեսած ու լսած լինին նոցա պատմածները: Ընդհակառակն, նոյն իսկ Աւետարանները Յիսուսի Քրիստոսի, Նորա բնաւորութեան, Նորա ղիլքի և վարդապետութեան այնպիսի կենդանի, այնքան աննման և այնքան հոյակապ նկարագիրն են անում, որ սա դարեր անցուց, նոքա՝ աւետարանները պահպանել են մեզ համար վսեմութեամբ լի այնպիսի քարոզներ, որոնց խտրութիւնն ամեն մարդու աչքին է ընկնում, եթէ միայն սոքա կուրացած չեն թշուառ նախապաշարմունքներով: Իւրաքանչիւր ոք զգում է, որ այն յոյժ խորիմաստ և սրամիտ կանոնները, այն այնքան մաքուր և դարմանալի աննման ոճով ասած առակները, առարկայի խորը թափանցող այն պատասխաններն, այն խօսակցութիւնք յիշաւի արտասանած են և ճշգրտութեամբ գրի առնուած, այս ճառերից շատերն այնպիսի սերտ կապերով կապուած են Յիսուսի Քրիստոսի գործերի հետ, Նորա բժշկութեանց հետ, այն ամենի հետ, որ մենք անուանում ենք Նորա հրաշագործութիւնք, որ անհնարին է երևակայել աւելի անխզելի և սերտ կապ:

Ես չեմ կարող այստեղ չկցել մի սրտմանկան իրողութիւն: Մահմէդի առաջին կենսագիրները լցրին նորա կեանքը հրաշալի իրողութիւններով. ահա ծառը նորա առաջ շարժում է մերձենալով կամ հեռանալով նրանից, ահա ջուրն, որ բղխում է ժայռից նորա մերձենալով, ահա երևում են հրեշաակների լէգէոններ, որոնք մասնակցում են նորա պատերազմներին, բայց դուք կարող էք բոլոր այդ պատմութիւնները բաց թողնել և դրանով Մահմէդի անձնաւորութիւնը կերպարանափոխ չէ լինում և նորա Ղուրանի սուրանները իւրեանց մոլթն և միակերպ օտարօտի ինքնուրոյնութիւնից ոչինչ չեն կորցնում և այս նկատողութիւնն, որ ես վերաբերում եմ Մահ-

մէզին, նոյնպէս վերաբերելի է և բոլոր այլ կրօնական զիւյցաղներին: Ասկաւ ինչ սրամիտ, զարգացած քննութիւնը բաւական է, որ նոցա կեանքի նախնական հիմքը պարզուի և զատուի, յաւելուած բարդութիւններէց: Բայց գերբնականի այդ զատումն իրականից Քրիստոսի պատմութեան մէջ անհնարին է, ասում եմ, անել, առանց կերպարանափոխ անելու Նրան, առանց Նրան անհատականաւի և երբեմն այլանդակ—հրէշային էակ ցուցանելու: Երկուսից մէկն է. կամ Նորա կատարած գործերն իրական են կամ նոքա բոլորովին երեւակայական են: Եթէ նոքա իրական են, բայց ժխտուում է նոցա գերբնական բնաւորութիւնն, այն ժամանակ մնում է միայն կարծել թէ նոքա ձեռնածութիւնք են ճարպիկ հրաշագործի, որ գիտէ ազդել միամիտ ամբոխի վերայ—խղճուկ բացատրութիւն է, որ չէ կարող սպառնացանել և նոյն իսկ խիստ քննութիւնն, առանց յօգնութիւն կանչելու ամենանուրբ ածպարարութիւնն և որ այնքան սահմանափակում է Յիսուսի Քրիստոսի բարոյական կատարելութիւնն, որ սա երբէք չէ կարող բաւարարութիւն տալ բարձր խղճմտանքին, մինչև իսկ ամբոխի պարզ բարի զգացմունքին էլ: Եթէ Նորա գործողութիւնք լոկ երեւակայական են, այստեղ էլ դժուարութիւնն ոչ սակաւ անյուծելի է մնում, որովհետև այդպիսի դէպքում պէտք է ընդունել հետևեալը՝ թէ նորա կենսագիրներն, որոնք այնպիսի մանրամասն ճշգրտեամբ հաղորդում են մեզ Նորա այնքան քարոզներն ու երկար խօսակցութիւնքն, որոնք չէին կարող մոռացածին լինել, ըստ որում նոցա բովանդակած վարդապետութիւնը բոլորովին բարձր էր նոցա հասկացողութիւնից—պէտք է ընդունենք թէ Նորա կենսագիրները, սկսան յանկարծ ամենքն էլ մոլորուել և դարձան զոհ նոցա մոլորութեան կամ ամենաերեւակայական զառանցանաց, երբ նոքա նոյն էջերում սկսան պատմել Յիսուսի Քրիստոսի գործերը: Այն ինչ յանչափա աւելի հեշտ է ստուգապէս հաւաստիանալ գործերի քան քարոզների մէջ, ըստ որում նոքա ներգործում էին նոցա զգացմանց վերայ, որոնք վկայք էին նրանց: Խնդիրն, ինչպէս տեսնում էք, անելք է: Աւստի և մենք իրաւունք ունինք եզրակացնելու այս մասին, որ եթէ նոքա հրաժարուում են ընդունելու Յիսուսի Քրիս-

տոսի հրաշագործութիւնքը—դա ամենեւին նրանից չէ, որ նրանց տուա է թուում պատմական վկայութիւնն, այլ ամենից առաջ դորա պատճառը նոցա կանխակալ հայեացքներն են և այն, որ իրանց համար գերբնականի անկարելիութիւնը դաւանութիւն են ընդունած: Քննենք ուրեմն այս կարծիքական ճշմարտութիւնն և տեսնենք, թէ ինչ հարկ է մտածել նորա մասին:

Ներկայումս գերբնականին հաւատ ընծայելն այնպիսի անօրոտահութեան է ենթարկուած, որ շատ մտածող մարդիկ համարում են նրան բոլորովին խախտուած: «Կարելի է նախատեսնել այն օրն, ասում էր մօտիկ ժամանակ Ռինանն, երբ գերբնական երևոյթներին հաւատալն էլ այնքան սակաւ կշիռ կունենայ, որքան ներկայումս ունի հաւատն դէպի Վհուկներն»: Այս անհաւատութեան պատճառները բարդ են: Յաճախ սորա պատճառն այն եղանակի՝ մետոդի մէջն է, որ Սգիւտտ Կոնտը կոչում է դրական և որ ժրխտում է գիտութեան մէջ ամեն վերացական և կրօնական բացատրութիւն, հետեւելով միայն խիստ զննութեան ենթարկելի փաստերի ցույման: Այս մետոդն, որ առ երեսս շատ պարզ է, ներկայումս յաղթանակը տանում է, բայց հարկաւոր է դեռ ևս իմանալ, թէ արդեօք նա բաւական է մեր բարոյական և կրօնական նշանակութիւնը բացատրելու համար—հէնց մենք էլ այս ենք հաստատութեամբ մերժում:

Կայ և մի այլ եղանակ՝ մետոդ, որ նոյնքան հին է, ինչպէս Լպիկուրէսինը, որ հաստատում է, թէ բնութիւնը բաւական է ինքն իրանից բացատրուելու համար, որ բնութեան մէջ ամենայն ինչ նիւթին և սորա յատկութեանց է վերաբերուում: Պարզ է, որ այս վարդապետութիւնն ընդունողների համար չը կայ ոչ գերբնականութիւն ոչ Աստուած, ոչ առաջին պատճառն և ոչ էլ կրօն, սոցա հէտ նոքա գործ չունին: Նոքա ամեն ինչ վերաբերում են մի գոյացութեան—նիւթին և մի սկզբունքին—զօրութեան, որ հետըզհետէ զարգացմամբ առաջ է բերել երևելի աշխարհս:

Եւ չեմ վիճաբանում և ժխտում այդ վարդապետութիւնն: Եւ ցոյց եմ տալիս այն մեծ յաջողութիւնն, որ նա ունի: Եւ ամենեւին չեմ գառնում դէպի նիւթապաշտներն, այլ դառնում եմ

գէշի նոքա, որոնք ընդունում են, որ մարդու միտքը անսահման մանրամասնիկների շարժմանց հետեւանք չէ, որ բանականութիւնն այլ կարգի է պատկանում և ոչ նիւթի, որ բարոյական աղատութիւնն իրականութիւն է, որ աշխարհս առանց բարձրագոյն, բանական և կատարեալ պատճառի անհասկանալի է: Կարծես, այդ մարդիկ նոյն իսկ տրամաբանութեան ցեւցմունքներով պիտի հասնէին գերբնականի ճանաչողութեան: Բայց նոցա մէջ ես գտնում եմ՝ մի քանի հաստատումիտ հակառակորդներ այդ ճանաչողութեան: Նոքա չեն ժխտում նորա տեսական կարելիութիւնը: Նոցա իսկ գաղափարն Աստուծոյ ազատութեան և ամենակարողութեան վերայ թոյլ չէ տալիս նրանց Արարչին ստրուկ անել իւր իսկ զրածօրէնքներին, բայց այս պարզ մերկապարանոց և միջին կարելիութիւնը չէ կարող զիմադրել այն զգուանքին, որ նոցա զբրական մետոդների հիման վերայ զարգացած միտքը զգում է, երբ հարկ է լինում հրաշագործութեանց իրականութիւնն ընդունել:

Բայց թող թոյլատրուի մեզ նրանց ասել, որ այդպիսի զգուանքը վայել չէ իմաստասէրներին և նրանցից միայն նոքա են ճշմարտապէս անկախներն, որոնք գիտեն իրանց ժամանակի հոսանքին գիմադրել:

Ահա նոքա որպիսի իրայր սիրելի պատճառաբանութիւնն են առաջ բերում: Նոքա մատնացոյց են լինում ընդհանուր տպաւորութեան վերայ, որ անում է մեզ վերայ մարդկութեան կրօնական պատմութիւնը: Նոքա ասում են մեզ, որ բոլոր կրօններն, որոնք միայն գոյութիւն ունին, իրանց ծագման վերաբերմամբ, են շարք հրաշալի իրողութեանց, որ այս պահանջանքը— ոչինչ է արդէն այն պատճառով, որ նա հասարակաց է, ընդհանուր է և որ նա միայն մի բանի է վկայում, այն է, թէ նա մարդկային երեւակայութեան մոլորութիւն է, որ առաջացած է կրօնական գաղափարից, նոքա հարցնում են մեզ, թէ ինչո՞ւ մենք որոնք բնազդական հաստատամտութեամբ ժխտում ենք բոլոր գիցաբանութեանց առասպելախառն պատմութիւնքը, որանցից բացառութիւն ենք համարում աւետարանական պատմութիւնքն և զրոյցները, ինչո՞ւ մենք պատ-

մեւմենք Քրիստոսի մասին այն, որ ժխտում ենք Հին և ներկայ  
ժամանակի նշանաւոր հրաշագործներին:

Առարկութիւնը կասկածելի—անհիմն է: Տեսնենք արդեօք նա  
այնքան հաստատապէս ստոյգ է, որպիսի նրան կամենում են ցոյց  
տալ:

Ան/իճելի է, որ մարդս միշտ և ամենուրեք հաւատացել է, որ  
եթէ Աստուածութիւնը մասնակից է լինում մարդու լիճակին,  
այդ մասնակցութիւնը պէտք է երեւի այնպիսի գործողութեանց  
մէջ, որոնք իրանց երկրորդական պատճառներից թոյլ են տալիս  
գուշակելու առաջին ու բարձրագոյն պատճառը: Այս համո-  
զումն—որ միապէս յայանի է—առիթ տուեց անթիւ անհեթե-  
թութեանց և առասպելական իրողութեանց: Բայց սրանից կը  
հեռեւի՞ արդեօք, որ այդ համոզումն սխալ է: Ահա իսկական  
խնդիրը: Բայց ինձ համար խոստովանում եմ, այս համոզումն  
մեծ կշիռ և զօրութիւն ունի, ոչ միայն այն պատճառով, որ նա  
ընդհանրական է և որ շատ տակաւ իմաստասիրական բան է բովան-  
դակում իւր մէջ մարդկային խղճի ձգտմանց չճանաչումն, որ  
միշտ և ամենուրեք երեւացել է, այլ աւելի այն պատճառով, նա՛  
այդ համոզումն արգարանում է և ստուգում և բանականու-  
թեամբ, որովհետեւ եթէ Աստուած է, եթէ Նա կամենում է ճա-  
նաչուել և հիմնել իւր թագաւորութիւնը—կարծեմ՝ անհնարին է,  
որ Նա չը յայանուի իբրեւ իշխան բնութեան, իբրեւ ինքնակալ և  
ամենակարող Կալ: Կրօնական գերբնականութեան ժխտումն—  
միայն այն մոլորութեանց պատճառով, որոնք առաջանում են ձրգ-  
տումից դէպի նա՛ գերբնականութիւնը—բնաւ, վայել չէ զգոնա-  
միտ անձանց: Նոյնպէս կարելի էր ժխտել և ազօթքն, երկրպա-  
գութիւնը, ապագայ կեանքի յոյսը—կրօնը, մի խօսքով, միայն  
և եթէ այն պատճառով, որ մարդկային հոգւոյ այս արտայայտու-  
թիւնը յաճախ եղել են օտարօտի և երբեմն այլանդակ, անհե-  
թեթէ: Այ՛, այստեղ, ինչպէս և ամենուրեք մենք պէտք է զանա-  
զանենք ճշմարիտը ստիչ, գաղափարը սորա կոպիտ խեղաթիւրու-  
թիւններից և մեր պարտականութիւնն է Աւետարանի գերբնական  
իրողութեանց առաջ, որոնց պարզապէս լիպած են Նորա առա-

ջին վիճաներն, հանդէս չը գալ կամայական անհիմն ժխտումներով, այլ որոնել, թէ արդեօք այդ իրողութիւնքը չե՞ն ցոյց տալիս Աստուծոյ մասնակցութիւնը մարդկութեան պատմութեան մէջ:

Այս զօրեղ խորհրդածութեան վերայ աւելանում է և մի այլը: Բնութեան զննութիւնը ցոյց է տալիս մեզ բոլոր արարչագործութեան մէջ այն, որ կարելի է կոչել բարձրացող—աճող շարք—դասակարգութիւն: Ներքեւում—քառասային (անկազմ և անյարդար) նիւթ, որոյ կառավարիչն են լոկ մեքենական օրէնքները, վերեւում—նախ բուսական կեանքը, ապա շարժողութիւն բնագլուխ և մոլթը ճանաչողութիւն ունեցող կեանքը, որ տակաւ առ տակաւ բարձրանում է մինչև բանականութիւն և բարոյականութիւն: Մեզ ասում են ներկայումս, որ այս բարձրացող—աճող յառաջատուութիւնը հասարակ հետեանք է շրջափոխութեան, որ հազարաւոր դարեր են տեւել: Ես մի կողմն եմ թողնում այս կարծիքն և նրան չեմ ջրիլ, այլ միայն հաստատում եմ և պնդում, որ այս դասակարգութիւններից իւրաքանչիւրի մէջ մենք կարող ենք դիտել կեանքի նոր արտայայտութիւն, որ գերբնական է նախընթացի հետ համեմատելով, որովհետև այդ կեանքն այնպիսի երևոյթներով է արտայայտուում, որոնք չէ կարող արտագրել նախընթաց դասակարգը: Ակներև է, որ երբ կեանքը հանդէս է գալիս այնտեղ, ուր մինչև այն ժամանակ իշխում էր լոկ մեքենայականութիւնը—նա՛ կեանքն իւր հետ բերում է կենսաբանական կարգին պատկանող երևոյթներ: Կենդանու կեանքը աւելի բարձր արտայայտութիւնք կունենան, քան որպիսիք տեսնում ենք բոյսի մէջ: Աչքի առաջ առէք այժմ մարդուն այն շրջանում, ուր նրանից առաջ երևացել է միայն անբան կենդանին, մարդը այնտեղ ցոյց կը տայ նոր կարգի իշխանութիւն, նա բնութեան օրէնքների հետեանքները կը փոխէ, նա կօպիտ զօրութիւնն կը ծառայեցնէ որոշ և իմաստուն նպատակի: Նա առաջը կառնու ծանրութեան օրէնքի, ծառին կը պատուատուէ այնպիսի ճիւղ, որպիսին նա մինչև ցայժմ չէր աճեցրել. կենդանեաց դասակարգում նա այլ և այլ սեւեր խառնելով առաջ կը բերէ ցայժմ անյայտ տիպեր կենդանեաց: Մարդկային թագաւորութիւնը կարտագրէ այն-

պիսի երևոյթներ, որոնք գերբնական կը լինեն այն թագաւորութեան (գասակարգի) համար, որ ճանաչում է միայն մեքենական զօրութիւն, կենդանական և բուսական կեանքի երևոյթներ: Ընդունենք, որ մենք բարձրացել ենք աւելի բարձր շրջան, որ մենք մարդկային թագաւորութիւնից բարձր էլ ընդունում ենք այն—երևոյթն, որ Աւետարանում կոչւում է Աստուծոյ թագաւորութիւն մարդոց մէջ.—ես ասում եմ որ այս թագաւորութեան գալուստը կը բերէ իւր հետ անխուսելի նմանութեամբ երևոյթներ, որոնք ապացուցանում են բանականութեան գերազանցութիւնը նիւթի վերայ և սրբութեան գերազանցութիւնը չարութեան վերայ:

Այս խորհրդածութեան վերայ ես աւելացնում եմ և երրորդն, որ մեր աչքում աւելի զօրեղ է և վճռական: Միայն շատ վերի վերոյ վարկարարակի լաւատեսը կարող է պնդել, որ այն բնութիւնն, որպիսին մենք տեսնում ենք մարդուս մէջ, գոտանում է իւր բուն կանոնաւոր և իսկական վիճակի մէջ, բայց իսկապէս ամենուրեք անկանոնութիւնը են—բանականութեան շրջանում արտայայտուում են այդ անկանոնութիւնը անհեթեթ սխալանաց մէջ, խղճմբտանքի շրջանում—ստութեան մէջ, սրտի շրջանում—ինքնասիրութեան և անկարգ իրականութեանց մէջ, ֆիզիքական շրջանում՝ զգայականութեան, անարժան գործողութեանց և ցաւերի մէջ:

Ամեն ինչ բարւոք է, ասող կամայական իմաստակներին մարդկութիւնն իբրև սրտատխան մատնացոյց է լինում իւր տանջանաց և վիշտերի աղաղակի վերայ: Նրանց, որոնք պնդում են, որ չարիքը պէտք է գոյութիւն ունենայ, մարդկութիւնը պատասխանում է խղճի բողոքներով և իւր թշուառութեան վշտալի գիտակցութեամբ, որովհետև մարդուս հոգին ուղիւնդի նման իւր մակընթացութիւնքն ու տեղատուութիւնքն և նորա յանցանաց մակընթացութեան պատասխանն է խղճի խայթերի տեղատուութիւնը: Եթէ չարութիւնը սկզբնական կենդանական բնութեան սոյորական ժառանգութիւնը լինէր, բնականաբար մենք նրան կընդունէինք, բայց մարդս անբան կենդանի չէ, իսկ երբ նա անասնանում է, քան զկենդանին ստորանում է: Նա իւր բնութեան խա-

բռնէ, նրան զեղխացնումէ, նա հասնումէ բնականից ստոր և հակաբնական լիճակի: Եթէ պէտք է լինի մարդկութեան փրկութիւն, սա կը կատարուի նորա իսկական բնութեան վերականգմամբ, որ ստեղծած է ըստ պատկերի Աստուծոյ: Ատոր բնականն անշուշտ պահանջումէ գերբնականի յայանութիւնը: Եւ այն, ինչ որ մենք գերբնական ենք անուանում Յիսուսի Քրիստոսի գործում, ի՞նչ է, եթէ ոչ վերականգնումն մարդկային բնութեան իւր իսկական լիճակի մէջ, այնպիսի լիճակի մէջ, որպիսին Աստուած կամենում էր: Ահա այն յոյժ խորին բարոյական գիծն, որ զանազանում է Յիսուսի Քրիստոսի հրաշքներն այն առասպելական իրողութիւններից, սրտնք հետեանք են հրաշալեաց որոնման: Բայց ոչ որ այնպէս խրատութեամբ չէ գատապարտել հրաշք խնդրելն, ինչպէս ինքն Յիսուս Քրիստոս: Այ որ աւելի բացայայտ կերպով չէ ասել, թէ միայն հրաշքն անօգուտ է, և որովհետեւ որ հա այսպէս էր կարծում, հա հրաժարուում է իւր աստուածային իշխանութիւնը հրապարակական հանգէս հանելու:

Այնչ, ամենեւին ոչ մի բան նորա մէջ չէ յարուցանում հրաշագործի գաղափար, նորա գործողութիւնը վսեմ են և պարզ, ինչպէս և նորա քարոզներն և սոցա մէջ, ինչպէս և այլ խօսքերում՝ ամենից առաջ երևում է, արտափայլում է Փրկիչը: Բայց փրկութիւնն, որ հա կամենում է կատարել, իրան առարկայ ունի մարդկային ամբողջ բնութիւնն և՛ մարմնաւորն և՛ հոգեւորը միանգամայն: Ես պնդում եմ՝ այս խօսքի վերայ՝ մարմնաւորը, որովհետեւ քրիստոնէթիւնը հակառակ Արեւելքի բոլոր կրօններին և նախնի փիլիսոփաներին երբէք չէ ընդունած մարմնոյ մէջ չարութեան սկզբունքը և յայանում է պահանջ սրբելու և փրկելու ամբողջ մարդուն: Բայց ինչպէս կարող էր Յիսուս Քրիստոս այս անարատ բնութեան վերականգնումն կատարել, եթէ նա միայն բաւականանար վարդապետելով, եթէ նա չը գործէր, եթէ հա իւր աստուածային ձեռքերը չը մերձեցնէր ի ծնէ կոյրերին, զիւահարներին ու բորտոններին: Անշուշտ դուք համաձայն էք, որ Յիսուս Քրիստոս, իւր խօսակցութեանց մէջ բողոքում է բռնութեան յանդուգն յաղթանակի գէմ, արդարութիւնն և իրաւունքն ի չարը գործ զնելուն գէմ, բարոյա-

կան չարութեան երրակի արտայայտութեանց գէմ՝ այն է զգայականութեան, ինքնասիրութեան, և բարկութեան գէմ, դուք զգածուած էք անշուշտ, որ Նա աստուածային գործի աւերակի առաջ, գործի, որ այնպէս կերպարանափոխուած է, որոշում է ձեզ աստուածային թագաւորութեան գծերը, այս քարոզութեան մէջ դուք ճանաչում էք կրօնական ճշմարտութեան նախագուշակն, բայց <sup>նր</sup> իրաւունքով, <sup>նր</sup> կանխակալ գաղափարի զօրութեամբ դուք արգելում էք նրան գործողութեամբ իրագործելու այն, ինչ որ Նա յայտնում է իւր քարոզների մէջ: Միթէ Հարկ էր, որ Նա անգործ մնար մարմնաւոր տանջանայ առաջ, որ Նա բաւականանար միայն զննելով, խորհրդածելով, սոսկ կարեկցութիւն յայտնելով, ի տես զարհուրելի հիւանդութեան, որ խեղում է բոլորներին, ի տես կոյրի ազօտ կերպարանքին կամ ի տես թշուառ դիւահարի ծռմուած գծագրութեան, որ նորա երկիւղի և վշտի արդիւնքն է: Հարկ էր, որ Նա զինաթափ մնար մահուան առաջ: Հարկ էր, որ Նա ենթարկուէր նրան, յայթուելով նրանից, ինչպէս բոլոր մարդու որդիք, թողլով աշխարհիս իրրեւ հրաժարական ողջոյն լոկ տեսական մի բողոք, որոյ պատասխանը լինում է բնութեան անխուտելի ծաղրը, բնութեան, որ ենթարկուած է չարութեան յաւիտենական ճակատագրութեան: Քրիստոնէութիւնը միայն հասկացաւ փրկագործութիւնը, Նա ճանաչում է Յիսուսի Քրիստոսի մէջ մի լակ, որ է ճշմարիտ Արդի մարդոյ, մարդութեան բոլոր սպայմաններին ենթարկուած, լակ, որ բարձրանում մեծանում է, պատերազմում է և սրբագործում է իրան, բայց միևնոյն ժամանակ թէ իւր քարոզներով և թէ գործերով յայտնում է մեզ Աստուծոյ մասնակցութիւնը մարդկութեան մէջ— լակ, որ միշտ և ամենուրեք հաստատում է բանականութեան գերազանցութիւնը նիւթի վերայ, սրբութեանը չարութեան վերայ և վերջապէս կեանքի գերազանցութիւնը մահուան վերայ:

Ահա, եղբայրք, Աւետարանների և բոլոր Աւետարանների Քրիստոսը, առաքելոց և բոլոր առաքելոց Քրիստոսը, միակն, որի կեանքը առանց խեղաթիւրութեան բացատրուում է այն բնագիրներով, որ նոքա մեզ աւանդել են, միակն, որ կարողացաւ հիմնել երկրիս վե-

րայ եկեղեցի, միակն, որին կարող է ճանաչել և դառանել հաւատա-  
ցելոց խիղճը: Եւ դեռ զարմանում են, որ մենք հաստատամտու-  
թեամբ բողոքում ենք այն տեսութեանց դէմ, որոնք Նորա պատ-  
մութեան մէջ տեսնում են միայն անկապ խառնուրդ առասպելների  
և ճշմարտութեանց, բարոյական կատարելութեան և երկբայելի  
հրաշից, աստուածային մեծութեան և սուտ նշանների,—կարծես  
հնարաւոր լինի յոշոտելու այդ կենդանի միութիւնն և այդ բարձր  
պատկերից կազմելու խառնուրդ անձն և անհեթեթ տարրների:  
Եթէ Նորա մէջ մարդ կ'ամենում են տեսնել, եթէ կ'ամենում են Նո-  
րա կեանքից հեռացնել բոլոր այն, ինչ որ մեզ գերբնական է թու-  
ում, անհրաժեշտ է Աւետարանները քննութեան (կրիտիկայի) փո-  
փոխական բաղդին ենթարկել, կրիտիկայի, որոյ հակասական եզրա-  
կացութիւնք ամեն ինչ հիմն ի վեր տապալեցին, և ի դուր աշխա-  
տում են այս գերմարդկային պատկերը պատմական չրջանակի մէջ  
դնել, Նա նրանց միշտ կատիպէ գողալու: Կարելի է Կեոսրին, Մահ-  
մէդին, Բուդդային, Կոնֆուկիոսին բացատրել, պարզաբանել, բայց  
Յիսուս Քրիստոսին մեկնաբանել չեն կարող: Յանկանում էք արգելք  
ապացոյց: Ապացոյցը նրանումն է, որ դուք բաւարարութիւն չէք  
տեսցած ոչ մէկից այն բացատրութեանց, որ շարունակ կրկնում  
են և որպիսիք ինձանից էլ լսեցիք: Եւ ապացոյցը նրանումն է, որ ամեն  
ժամանակաշրջան բարձրացնում է այս խնդիրն, առանց երբէք նրան  
որոշել կարողանալու: «Ձի՛նչ ընդ քեզ և ընդ մեզ Յիսուս Նազովրե-  
ցի», ազազակո՛ւմ էր երբեմն Կաթառնառումի գիււհաբը: Ահա մարդ-  
կային խղճի ազազակն և սրան կրկնում է իւրաքանչիւր սերունդ  
յափշտակուած երբեմն զարմացմամբ, երբեմն վրդովմամբ, անցնե-  
լով այն պատկերի երկրպագութիւնից դէպի Նորա նախատումն,  
պատկերի, որոյ կատարելութիւնը նրան և գրաւում քարշում է  
և յետ է մղում, յափշտակուած և անարատ բնագոյումով, որ աւելի  
զօրեղ է, քան ամեն սովետութիւնները, հասկանալով, որ Յիսուս  
Քրիստոս ոչ այլ որ պէտք է լինի, եթէ ոչ վարդապետ և արքայ:

## Ե.

Մենք տեսանք, եղբարք, այն ինչ որ կարելի է կոչել Յիսուսի Քրիստոսի իրաւունք և պահանջ: Մենք այժմ՝ պէտք է նայենք, թէ արդեօք այդ պահանջներն իրագործուեցան: Երբիցեւ միայն պահանջներ անելն, եթէ անհնար է նրանց իրագործել: Ակնյայտնի չէ՞, թէ որքան վսեմ է խորհրդածութիւնն, այնքան էլ թշուառ է նորա կատարման անցաջողութիւնը: Հարցնենք ուրեմն պատմութիւնից, թէ սա որպիսի վկայութիւն է ապիս Յիսուսի Քրիստոսի արքայական արժանեաց մասին:

Բայց նրանից ծանրաւշիւ ստոյգ պատասխան ստանալու համար, անհրաժեշտ է հարցը բացայայտ անել: Ի՞նչ քարոզեց Քրիստոս: Մենք ասացինք— բարոյական և կրօնական արքայութիւն: Իրաւ չէ՞, որ անհեթեթութիւն կը լինէր սորա յայտնութիւնը քաղաքական և զուտ մտաւորական շրջաններում որոնելն և կրկնել Հռոմայեցոց հին երգիծաբանութիւնքն, որոնք ծիծաղում էին այն թագաւորի վերայ, որ թոյլ տուեց իրան իսաւել, կամ Յելսի հին կատակներն ագէտների այն կրօնի վերայ, որ իրան հետեւողներ ժողովում է արհեստաւորների, նաւաւարների և նաւաստիների շրջաններից: Այս արքայութիւնը բարոյական տեսակից լինելով, կարող է իրագործուել միայն աչքի առաջ ունենալով մարդկային ազատութիւնը: Նա չէ գրաւում առ ինքն ոչ բուռն զօրութեամբ, ոչ տեսանելի այնպիսի երևոյթներով, որոնք գործէին զգացմանց վերայ անդիմադրելի օրհասական տալաւորութիւն, և ոչ գիտնական բացատրութեամբ, որ ճշշումն կը գործէր յոյժ փոքրաթիւ մարդոց մտաց վերայ և նրանց կենթարկէր իրան իւր մատիմատիքական ճշգրտութեամբ, որ բարոյականութեան ոչ մի նշոյլ չէ բովանդակում իւր մէջ: Եթէ եկեղեցին, մնւանալով այս մեծ սկզբունքն, ցանկանար իրագործել այս թագաւորութիւնը մարմնաւոր ձեռքերով, այդ կը լինէր հակառակ նորա Պիտոյ յայտնած կամքին: Այսպէս ուրեմն անակնկալելի չէ տեսնել, որ այդ թագաւորութիւնը հերթով երբեմն կընդունուի և երբեմն կը հարուածուի, կը դաւանուի և կը անիծուի: Հէնց այս էլ քարոզում էր և գուշակում Յիսուս Քրիս-

տոս: Նա յաճախ ասում էր աշակերտներին այն ապագայի մասին, որ նրանց սպասում է: Եւ պատրաստ եմ վիճաբանելով պնդելու, որ այդ քարոզներէ մէջ անհնար է գտնել ոչ մի լաւատես յոյս, անմիջական կամ համաշխարհական յաջողութեան ոչ մի խոստումն: Նոցա արած տպաւորութիւնը տխուր է. բայց ոչ այնպէս տխուր— ո՛հ, քան այն տպաւորութիւնը, որ անում է եկեղեցւոյ պատմութիւնն յընթացս այս տասն և ութը դարերի: Կը լինի պատերազմ, ասում է վարդապետը, հալածանք և ուրացութիւն. երբեմն կը լինի սարսափելի դարումն ճշմարտութեան դէմ: Դէպքերը կը շարունակեն կատարելու իրանց միակերպ ընթացքը՝ պատերազմունք և շառաւիղներ պատերազմականք ինչպէս ամեն ժամանակ եղել են: Բայց մանանեխի հատը կը դառնայ մեծ ծառ և ազգերը կորոնեն ապաստանարան նորա ստուերի տակ: Աւետարանը միայն երկու բան բացայայտ կերպով քարոզած է՝ դիմագրութիւն և յառաջագիմութիւն, հալածանք և յաղթութիւն, կամ աւելի լաւ է ասենք— յաջողութիւն մինչև իսկ պարտութեան մէջ, ինչպէս Գողգոթայի օրը, և այսպէս ցվախճան: Եւ գիտեմ, եղբայրք, որ աստուածային այս նախագիծը մեզ զարմացնում է՝ մենք չենք կարողանում հասկանալ, ինչպէս ամենակարող և ամենաբարի Աստուածը համաձայնում է տանել այս երկսրտեւ յետաձգմանց այն կարճատեւ դարձուածներին, որոնք պարտութիւն են թուում: Եթէ մենք Նորա տեղը լինէինք, անտարակոյս մենք անմիջապէս թոյլ կը տայինք, որ արգարութիւնը յաղթանակէ և ճշմարտութիւնը փառաւորապէս երևան գայ: Բայց Աստուած այս չը կամեցաւ: Նրան հաճոյ եղաւ, որ կրօնական ճշմարտութիւնն ենթարկուէր բոլոր այն օրէնքներին, որոնք ներգործում են ամեն մարդկային իրերի վերայ, և որ այդ ճշմարտութիւնն, ինչպէս իւր մարմնացման օրը Քրիստոսի սուրբ մարդութեան մէջ փարիսեցիներից և դպիրներից ծուռը բացատրուեցաւ, մերժուեցաւ իւր իսկ աշակերտներից, ծաղրեցաւ Հերովդէսից և Պիղատոսից, զինուորների ապտակման և թքին ենթարկուեցաւ— նոյնպէս և իւր մարմնացման ժամանակ յընթացս տասն և ութը դարերի մեր արատաւորուած վնասուած մարդկութեան գողում, նա անձնատուր լինէր խեցեղէն անօթներին, մարդիկներից մարդոց

աւանդուէր, ճշգրտութեամբ չը փոխադրուէր սոցա անկատար լեզուով, խեղաթիւրուէր, զրպարտանաց ենթարկուէր, յաճախ և հալածանաց, յանձնուէր իւր աշակերտաց անկարողութեան, փտանգի ենթարկուէր սոցա սխալներով, վայելէր նոցա անձնազոհութեան գիտութեան կամ հաստատամտութեան արդիւնքը, քարոզուէր նոցա խօսքով, տալագրութեամբ, շոգիով, լոյսի և ազատութեան տարածմամբ, ապա յանկարծ կանգ առնէր գուցէ երկար ժամանակով մի որ և է աննշան դէպքի առաջ, որ և է օրհասական պատճառից, որոյ առաջ տեղի էին տալիս նորա ամենաջերմեռանդ առաքեալները, նրան անպաշտպան թողնելով:

Այսպէս է երևում ինձ պատմութեան մէջ Յիսուսի քրիստոսի թագաւորութիւնն, աստուածայինն իւր ծագմամբ և մարդկայինն իւր լինակով, ենթարկուած ներկայ իրողութեանց բոլոր աղետաբեր բերմանց և կարճատե պարտութիւնից յետոյ դէպի ստոյգ և կատարեալ յաղթութիւն երթալով: Մի հարցնէք մեզ, թէ արդեօք Քրիստոսի գարծը միշտ ժողովրդական է և միշտ յաղթական: Մենք առաջ Աւետարանը ձեռքներումն ասացինք, որ այդ անկարելի է: Բայց հարցրէք, թէ արդեօք իրական է Նորա հոգւոր թագաւորութիւնն և այն ժամանակ մենք առաջ կը դառնանք նրան ընդունողներին և ապա նրան մերթողներին, թէ արդեօք նոքա յայտնում են արհամարհանք դէպի Նա և կամ Նրան չեն ընդունում: չեն ճանաչում:

Առաջ առաջ լսեցէք Նրան ընդունողներին. «Նա—Աքբայ է»: Ահա երգն, որ երգում է քրիստոնեայ եկեղեցին բոլոր երկնից ներքոյ և որ Նորան կրկնում են ամենքն, ով խոնարհել է Յիսուսի Քրիստոսի խաղաղարար և քաղցր լծի տակ: Հէնց այսօր մենք կարող էինք լսել նոյն երգն ամեն հասակի և ազգի միլիոնաւոր հաւատացեալների բերաններից. ոմանք երգում են այն երիասարդական ջերմեռանդութեան պարզամիտ ուրախութեան մէջ, որպիսիք են բիւրաւոր մանկունք, որոնց ամեն սերունդ գնում է Նորա ոտի առաջ, Ար ասաց «Թոյլ տուք դոցա գալ առ իս». այլք երգում են նրան զօրեղ և գիտակից համոզման հաստատամտութեամբ, ոմանք մեղաւորի ապաշխարութեան աղաղակով, որ թողած է իւր ան-

ցեալ մոլորութիւնքն, այլք արտասուօք մեծ վշտի, որ ցրուել է Բարձրագոյն Մխիթարչի յայտնութիւնը:

Սեմի զաւակներն առաջինն ողջունեցին այն արքայութեան գալուստը. բայց Յունաստանն էլ զգում էր Նորա բարոյական գեղեցկութիւնը, Հռոմն էլ տակաւ առ տակաւ ենթարկուեցաւ նրան, և երբ ամբարտաւան և վայրենի ազգերն դուրս եկան Վերմանիայի անտառներից և Հին Ասիայի անապատներից, սոքա էլ խոնարհեցան խաչեցեալի առաջ, ինչպէս զորօրինակ Գոթացիք, իրանց խարտեաշ մազերով, անգլո-սաքսոն ազգերի նախնիք, որոնց երկրպագութիւնը Քրիստոսին տեսաւ Ոսկեբերանը Կոստանդնուպօլսի մատուռներից մէկում և որոյ մասին մարգարէական նախատեսութեամբ ասաց, թէ ապագայում նոքա կը բարձրացնեն Աւետարանի դրօշակն, որն որ Յոյները վայր գցեցին իրանց անարժան ձեռքերից: Այսպէս դարից դար քրիստոնէութիւնն ընդարձակում էր իւր սահմաններն: Այժմ չը կայ մի հաւատացեալ, որ նայելով աշխարհիս քարտէսի՝ Աֆրիկայի վերայ, որ երկար ժամանակ անիծեալ երկիր էր, որոյ աւազները հեղեղի պէս ծծել են մարդկային արիւն և կամ՝ նայելով Զինաստանի և Հնդկիկների հինաւուրց պետութեանց վերայ, չասէ՝ երբ և իցէ այս ազգերն էլ կենթարկուին Յիսուսի Քրիստոսի իշխանութեան: Այս, արտաքին տեսքով, լեզուով, բնաւորութեամբ և հանճարով միմեանցից շատ տարբեր ազգերի մէջ կանգնում է Յիսուս Քրիստոս թագաւորութիւն, որ հիմնուած է նորա վերայ, ինչ որ մարդու մէջ ամենատերտն է և խորինը, որ, եթէ հարկ լինէր, շատերը իմ ունկնդիրներիցս կը վկայեն, որոնք Նորա անուան հետ կապում են իրանց ներքին կեանքի բոլոր ամենամեծ յուզմունքներն և որոշումներն, որ յաճախ նրանց փրկած են: Ո՞ր թագաւորութիւնը կարող է սորա հետ համեմատուել: Ինչպէս որ ծովային մակընթացութիւնը բարձրացնում է ոլկեանոսն բոլոր աշխարհիս ծովեզրների վերայ, այնպէս էլ և երկրպագութիւնն այս թագաւորութեան առաջ, բերում է Քրիստոսի ոտքի տակ բոլոր սրտերն, որոց Ուսուցիչն է Նա. և մինչև իսկ նոքա, որոնց այս ընթացքը չէ քաշում իւր հետ, պէտք է խոստովանին, որ մարդկային որդիներից ոչ ոք այնպէս սիրելի չեղաւ, ինչպէս Նա:

Եւ սպասուում եմ, որ մեզ կասեն, թէ այս նուագահանգէսի մէջ կան աններդաշնակ ձայներ և որ այդ թագաւորութիւնն իւր առաջին իսկ օրերից խտտութեամբ հարուածուում էր: Եւ այդ չեմ մոռանում և մի անգամ ես յիշեցի, որ Քրիստոս այդ գուշակեց: Ուշ դարձուցէք, ճշմարտութիւնն միշտ ճանաչուում է երկու նշաններով՝ սիրով, որ նա արծարծում է և այն ատելութեամբ, որ նա յարուցանում կան անէծք ու նզովքներ, որոնք նորա համար աւելի պատուաբեր են, քան երկրպագութիւնը Նրան. երբ բոլոր կրօնքերը, բոլոր յանցանքները, Հին Հռովմի բոլոր խտտութիւնները, ապստամբելով նորածին եկեղեցու գէմ, իւր կուսական զգեստում, բարձրացրին նորա գէմ իրանց զայրացման աղաղակները, նոյն իսկ այս ձայներն էլ ինչպէս քրիստոնեայք, իրանց հոգեւոր երգերում, ասում էին, թէ Քրիստոս է թագաւոր՝ սիրոյ, արդարութեան և սրբութեան: Միթէ դուք այդ չեք հասկանում: Միթէ դուք կը կաւամենայիք, որ Ներոնը ողջունէր Քրիստոսին այլապէս, քան զարութեամբ և որ Նա, ինչպէս և շատ կեսարներ Նորա ցեղից, իւր զեղխութեան և խտտութեանց հետ խառնէր աղերսներ առ Սուրբ Աստուածը:

Դուք ինձ կառարկէք, այդ ես գիտեմ: Հէնց ես ինքս էլ ինձ կասեմ, որ մեր օրերումն այլ ևս հարցն այդպէս չէ դնուում և որ կատարեալ անարդարութիւն կը լինէր ամենքին, որոնք երեսն դարձնում Յիսուս Քրիստոսից, դասել ի շարս նոցա, ոյք հետեւում են իրանց մեծամտութեան և ապականուած սրտերի ազդման: Դուք մատնացոյց կը լինէք այնպիսի մարդոց վերայ՝ երեւելի հանճարների վերայ, որոնք մտերմաբար հետեւելով իրանց խղճի թելադրութեանց որոնում են կանոններ իրանց վարուց և կենցաղավարութեան ուղղութեան համար: Եղբարք, ես ընդունում եմ այս փաստերը, նախ հաստատապէս որոշելով, որ լաւն վատ երբէք չանուանուի և ողջունուի անարատ կեանքն, ուր և ես նրան հանդիպեմ, չը նայելով թէ նա, ինչպէս յաճախ տեսած եմ, միացած է նախապաշարեալ գաղափարների հետ, որոնք ես դատաւարտում եմ, կամ թէ բացասութեանց հետ, որոնք ինձ յուսահատեցնում են:

Այո, շատ ստոյգ է, որ Յիսուսի Քրիստոսի գրօշակի ներքոյ շրք-

ջուսմեն մարդիկ, որոց կեանքն եկեղեցու համար անպատուութեան և գայթակղութեան առարկայ է և ի շարս նոցա, որոնք մերժում են քրիստոնէական եկեղեցին, գտանուում են այնպիսի անձինք, որոնց չենք կարող մեր յարգանքը զլանալ: Տասն և ութը դարեր անցան այն ժամանակից, երբ Վարդապետը գուշակեց, որ որոմներ կը բուսեն այն արտում, որ ինքը սերմանելու եկած էր և որ հորա աշակերտների պարտաւորութիւնը չէ նրանց արմատախիլ անել, քաղել: Այս իրողութիւնը տրամեցնում է ինձ, բայց չէ խախտում հաւատս և ես պարզամտութեամբ կասեմ ձեզ, թէ ինչ պատճառով:

Հաւատարմութիւնն առ Յիսուս Քրիստոս արտայայտուում է երկու բանում՝ հաւատոյ մէջ առ հորա անձնաւորութիւնն և հրպատակութեան մէջ հորա կամքին: Այս երկու տարրերը միանալով կազմում են քրիստոնէական կեանքը. որքան սերտ է այս միութեան կապն, այնքան կեանքը աւելի լարուած է: Բայց պատմութիւնը ցոյց է տալիս, որ այս կապը հազուադէպ երևոյթ է: Եղած են ժամանակներ և այն շատ երկարատե ժամանակ, երբ հաւատի սորա միութեան, սորա ուղղափառութեան պահպանութիւնը տիրապետող էր, եկեղեցու բացառական գաղափարն էր, երբ քրիստոնէական կեանքը գրեթէ գոսացած էր և հաւատը, բաժանած կեանքից, աւելի և աւելի դառնում էր արտաքին, մտաւորական և չոր ու ցամաք: Յիշեցէք Բիւղանդիոնը, ուր նոյնքան նուրբ, որքան և խիստ ու բիրտ վիճաբանութիւնը աստուածային էութեան մասին խառնուում էին զեղիս արքունեաց նուրբ բաւականութեանց հետ. յիշեցէք Մերովինգների ժամանակը, երբ բազմանում էին սպանութիւնը և թունաւորութիւնը, իսկ մատուռների վերայ կարելի էր կարդալ այն վսեմ արձանագրութիւնը՝ *Christus vineit* (Քրիստոս յաղթում է) *Christus regnat* (Քրիստոս թագաւորում է) *Cristus imperat* (Քրիստոս հրամայում իշխում է): Յիշեցէք Իտալիան ԺԵ-երորդ դարում, Վալուայի արքունիքը ԺԶ-երորդ դարում և Լուդովիկոս ԺԶ-երորդի ծերութիւնը: Շինուածքի արտաքինը հրապուրիչ է, հոյակապ է, բայց բարոյական նեխումն ծածուկ մաշում է նորա հիմքը մինչև այն ժամանակ, երբ նա մրկի շառաչւնով կը խորտակուի:

Այս ծայրահեղութիւնը անհրաժեշտապէս առաջ են բերում այլ ծայրահեղութիւնք, առանց սորա մարդկութիւնը մարդկութիւն չէր լինիլ: Երբ որ հնչում է նրանցից ազատուելու ժամը, սկսում են ատել, անիծել այն վարդապետութիւնն, այն դաւանաբանութիւնք, յանուն որոց կատարուում էր այնքան անարդարութիւն: Եւ որպէս զի աւելի լաւ ջրեն նրանց, գիտէք, ի՞նչ են անում: Նրանց ընդդէմ դնում են արդարութեան, հաւասարութեան, սիրոյ, ողորմածութեան սկզբունքներն, մի բան միայն մոռանալով, որ այդ սկզբունքներն են—նոյն իսկ Աւետարանի հիմն և նոքա ուղղակի ծագում են Յիսուս Քրիստոսից: Այո, այսպէս նոքա Յիսուս Քրիստոսին կանգնեցնում են նոյն իսկ Յիսուս Քրիստոսի ընդդէմ: Ոմանք գործում են թշնամեաց նախազգուշութեամբ, որոնք ճարպիկութեամբ գիտեն զէնք ընտրել: Այսպէս էր Վոլտէր, որոյ մասին արդարութեամբ կարելի է ասել, որ նա, կտրելով քրիստոնէութեան չորացած ծառը, թոյլ տուեց նրանից և պտուղներին թափուելու, որոնք հաւաքել մոռացան հաւատացեալք: Այլ չեն ճանաչում, մերժում են Քրիստոսին, սոքա Նրան այլապէս չեն տեսած, բայց եթէ տգիտութեան և անուղղայ նախադաշարմանց թանձր ստուերի մէջ, բայց պատեւազմելով Նորա դէմ: Նոքա անգիտակցաբար ենթարկուում են Նրան, դաւանելով Նորա վարդապետութիւնն ու խրատները և մինչդեռ քրիստոնեայք անուամբ միայն ընծայում են իրանց հաւատը Յիսուս Քրիստոսին, առանց իրանց կեանքը Նրան նուիրելու, այս ըստ անուան անհաւատները ծառայում են Նրան իրանց կեանքով, զլանալով Նրան իրանց հաւատը: Միթէ Քրիստոս բաժանուած է՝ ասում է Ս. Առաքեալն Պաւղոս: Ո՛հ, պատմութիւնը ցոյց է տալիս, որ այս բաժանումն շատ մեծ է, մի կողմում են հաւատացեալներ, առանց գործոց, միւս կողմում—գործողներ առանց հաւատի:

Այս մեր աղմկալից դարում ես այսպէս եմ տեսնում Յիսուս Քրիստոսի ազդեցութիւնը: Ո՛հ, ես գիտեմ, որ եկեղեցու վերայ ամեն կողմից գալիս են փոթորկի ուժգին փյւռներ: Սոքա գալիս են չր հաւատացող գիտութեան լեռների սառնամանիքից, այլք բարձրանում են ներքեւից, ուր ներգործում է դարաւոր տանջանքներից գրգռուած մեծ բազմութիւն մարդոց, սոքա են քարկութեան

չարութեան և հայհոյութեան աղաղակներ և ես սրանց լսելով յիշում եմ՝ Վարդապետի քաղցր խօսքը «ամեն հայհոյութիւն ընդդէմ Արդւոյ մարդոյ կը ներուի» և այն աղօթքն, որ անսահման ողորմածութեան արտայայտութիւն է «Հայր, ներիր նրանց, որովհետեւ չը գիտեն, ինչ են գործում»:

Եւ երբ հաւատացեալք, զարհուրած այս աղաղակներով, կը գան ինձ ասելու, թէ Քրիստոսի թագաւորութիւնը վերջանալու վերայ է, ինձ ցանկալի է նրանց պատասխանել. «Ո՛վ թերահաւատք, մի լաք Քրիստոսի վերայ, որովհետեւ Նա կենդանի է, այլ լացէք ձեր վերայ և այն կոյր ազգի վերայ, որ չէ ճանաչում Նրան, Ո՛վ կարող էր նրան փրկել»:

Ո՛չ, Նորա թագաւորութիւնն անխախտն է և ձեր շուրջը հանգչող վերջնալուսի միջով մենք ողջունում ենք օրուայ արշալոյսն, երբ նորոգուած եկեղեցին կը տեսնէ իւր պայծառ փայլը: Յանկանում էք արդեօք ապացոյցներ: Հարցրեցէք այն մարդոց, որոց սպառնալիքը ձեզ զարհուրեցնում է, հարցրեցէք թէ ի՞նչ է նոցա ապագայի ծրագիրը մարդկային հասարակութիւնքը բարելաւելու համար և դուք կը տեսնէք, որ այն ինչ որ նոցա ծրագիրը բովանդակում է բարերար և գործնական ինչ, է բանաբաղութիւն Աւետարանից, որ նոքա այլ ևս չեն ցանկանում, այն Աւետարանից, որոյ գործնական իրագործումն — յամօթ քրիստոնէից, պէտք է ասել — գեռ նոր է սկսուել:

Ի՞նչ են նոքա խնդրում. Արդարութիւն: Լսեցէք Աւետարանին՝ «Երանելի են, որոնք քաղցեալ են և ծարաւի վասն արդարութեան, որովհետեւ նոքա կը յագենան: Հաւատարմութիւն են խնդրում. լսեցէք Աւետարանին. «դուք եղբարք էք»: Յանկանում են ամենատեսակ ստրկութեան աքսորումն, օգնութիւն փոքրներին և թոյլերին, աւելի առատ արգար բաշխումն իրաւանց, աղքատութեան և տգիտութեան ջնջումն, համերաշխութեան մեծ օրէնքի գործնական իրականացումն են խնդրում: Բայց ինչպէս կարող է Աւետարանը հակառակ լինել այդ ամենին, քանի որ Նա առաջինն է այդ ամենը քարոզել: Ելի ի՞նչ են խնդրում նոքա: Ազգային թշնամութեանց և պատերազմների վերջաւորումն, խաղաղութեան թագաւորութիւն, բայց ո՛ւր է այդ թագաւորութիւնն աւելի վնեմ կերպով

նկարագրած բայց եթէ այն գրքում որ Ներոնի և Տիբերիոսի ժամանակներում պնդում հաստատում էր, թէ աշխարհիս տիրապետութիւնն ու ժառանգութիւնը կը պատկանի նրանց, որոնք խաղաղութիւն են սրոնում և ցանկանում: Մի ասէք, թէ դուք Աւետարանից առաջ էք անցել, երբ նա դառնում է գէպի ձեզ իբրև ապագայ ակնախտիս փարոս:

Ո՛հ, ես գիտեմ, որ Աւետարանում մի այլ ինչ ևս կայ՝ այնտեղ գտանվում են բարոյական ճշմարտութիւնք, որոց մասին դուք մտածում էք, թէ այսուհետև նրանցմով մարդս կարող է բաւականանալ, բայց այնտեղ հաստատուում է և՛ Աստուծոյ՝ Աբարչի, Որենաստուի և Կատաորի գոյութիւնն, այնտեղ քարոզուում է մեր բարոյական պատասխանատուութիւնը, մեր յանցաւորութիւնն և ապաշխարութեան և հաւատոյ անհրաժեշտութիւնը մեզ համար, այնտեղ յայտնուում է թողութեան աստուածային խոստումն, որ շնորհ է, նորա մէջ հաստատուում է խորին, անսահման սէրը Նորայ, Որին մենք մեզ Հայր ենք կոչում: Այնտեղ արտայայտուած է ստոյգ հաւաստութիւն Նորա անընդհատ գործունէութեան մարդկութեան պատմութեան և մեր կենաց ամենաշնչին պայմանների մէջ անգամ: Վերջապէս այնտեղ քարոզուում է յաւիտենական կեանք և որ ինչ միսիթարական սա իւր մէջ բովանդակում է այն սրտերի համար, որ պիտիք մերերն են, որոց երկրաւոր երջանկութիւնը փորձութեանց իշխանութեան ներքոյ է և, որոնք գուցէ հէնց վաղը պիտի պարտաւորուեն իրանց ամենաթանգագին դանձր փակելու կաղնեայ տախտակի տակ կամ եղևնեայ դագաղի մէջ: Այս կրօնական ճշմարտութիւնքն, որոնք մենք վարդապետութիւնք ենք կոչում, քրիստոնէութիւնն ամենասերտ կերպով կապել է բարոյական ճշմարտութեանց հետ, որոնք ներկայումս ջանք են անում բաժանել առաջիններից: Քրիստոնէութիւնն մարդկութիւնը ճանաչելով տեսել է, որ վերջինները ծագում են, առաջ են գալիս առաջիններից: Արդարեւ՝, կրօնը ջնջել ցանկալն, որպէս զի աւելի լաւ պահպանուի բարոյական կեանքը, կը նշանակէ հարթել հսկայական Ալպեան լեռներն և ջանք անել աւելի թափանցելու խորին ջրերի մէջ, որոնք հոսում են նրանցից, կարծես թէ Ռօնա և Ռէյն գետերը իրանց

սկիզբը չեն առնում այն սառնամանիքներից, որոնք կուտակուած են նոցա՝ Ալպերի գագաթների վերայ:

Մնում է իմանալ, թէ արդեօք կարելի է հարթել կրօնական վարդապետութիւնքն, որոնք մարդկային հոգւոյ Ալպեան լեռներն են, կը յաջողի արդեօք շիջուցանելու այն մեծ լոյսն, որ Աւետարանը ծաւալեց մեր նշանակութեան վերայ և մեզ յաջորդող սերունդը արդեօք կը գրէ՞ քսաներորդ դարի դռների ճակատին այն խօսքերն, որոնցով սուրբն Պաւլոս գլխաւորում բովանդակում է իւր ժամանակուան հեթանոս աշխարհի վիճակն, այն է խօսքերս. «Առանց Աստուծոյ, առանց յուսոյ»: Այ որ չէ կարող ասել, թէ ուր կը հասցնէ մեզ անաստուածութեամբ յափշտակուելն, որ այնքան մտքեր յուզում դրդում է, բայց ես պնդում եմ, որ մարդկութիւնը իւր պատուի համար կանգ չի առնիլ այդ սահուն հարթութեան վերայ և երբ նա՝ մարդկութիւնը կը կամենայ երթալ լուսոյ մօտ, նա պէտք է բռնէ ոչ թէ հասարակ մարդու որդւոյ դողդոջուն ձեռքը, այլ հզօր աջն Նորա, Որ միայն որոշեց մեղքի, չարչարանաց և մահուան խորհուրդներն և Ով յընթացս տաան և ութը դարերի ասում է նրան. «Ես եմ՝ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք, ոչ որ երթայ առ Հայր, բայց եթէ խնե»:

Իսկ մենք, քրիստոնեայք, որոնք գտել ենք Քրիստոսի մէջ մեր հոգւոյ թագաւորին, աւելի սերտութեամբ, քան երբ և իցէ, խըմբուենք Նորա դրօշակի շուրջն և որովհետեւ Աստուած կոչում է մեզ ծառայելու Նրան կրօնական ազատութեան մէջ, որ այնպիսի համարձակութեամբ պահանջում էին մեր հայրերն և որովհետեւ կրօնական յայտնութեան շրջանում, շնորհաց և եկեղեցու շրջանում մենք ունինք մեզ միայն մի Վարդապետ՝ Քրիստոսին, ուստի և երգուենք, որ Նրան հաւատարիմ կը մնանք մինչև մահուան ժամն, որ, Նորա շնորհիւ, կը հնչէ մեզ համար իբրև ժամ մօտանելոյ յաւիտենական կեանքը:

Եղբարք, երեք դար անցաւ այն ժամանակից, երբ մի մարդ, որ պէտք է Ֆրանսիայի բարեփոխութեան ամենամեծ գործիչը լինէր— Կասպար դը-Կոլինին պաշտպանում էր Սպանացւոյ դարհուրելի յարձակման դէմ Ս. Կլեմենտի փոքրիկ գիւղը: Վալուայի անդգուշու-

Թիւնը Զրանսիայի սահմաններն օտարականներին մատնեց, փլիկպոս երկրորդը (Սպանիայի Թագաւորը) փարիզ կերթար, եթէ հանգէս չը գար քաջերի այդ փոքրիկ խմբիկն, որ նորա արշաւանաց առաջն առաւ: Ս. Կլեմտինի գիւղն ունէր քայքայուած պատեր, տենպն և սուր կոտորումէին նորա պաշտպաններին, սարսափած բնակիչներն անձնատուր լինելու վերայ էին խօսում, ամենուրեք ոտուերում Թագնուած էր դաւաճանութիւն: Մի անգամ Թշնամիք գիւղի պատերի վերայ գցեցին նետ տոմակով, որով բնակիչներն խոստանում էին նոցա կեանքի և գոյից ապահովութիւն, եթէ անձնատուր լինեն: Մի սպանացի սպայ պատմում է, որ պատասխանի փոխարէն Կոլենին առնում է մի Թերթ մագաղաթ և գրում է նորա վերայ այս պարզ խօսքերը. Regem habemus (Թագաւոր ունինք), ապա ամրացնում է այս Թերթը աշտէի վերայ և ձգում Թշնամեաց բանակը: Regem habemus!. Մենք ունինք Թագաւոր: Այս գիւցաղնական արտայայտութիւն էր նորա հաւատոյ առ հայրենիքն, որը նորա արգար հոգին բուխանդակում էր Թագաւորի անձնաւորութեան մէջ և հէնց այս Թագաւորը Հենրիկոս երկրորդն էր, Եկատերինէ Մեգիլիի ամուսինը, հայրը Կարոլոս Իններորդի, որ դարձաւ Հուգենոսների մեծ զօրավարի Կոլինիի սպանիչը:

Եւ մենք բրիտոնեայքս, պաշարուած եկեղեցու այս հին ամրոցում, որոյ վերայ ամեն կողմից յարձակում են, կանգնած պատերի վերայ, որոնք յաճախ քայքայուում են, այնքան բազմաթիւ երկչոտ խորհուրդների և չարագուշակ աղաղակների մէջ, որոնք մեզ գուշակում են մօտիկ պարտութիւն, ասենք մենք էլ, regem habemus, մենք Թագաւոր ունինք, Թագաւոր արդարութեան և ճշմարտութեան, որ պէտք է յաղթէ աշխարհին և Արին վայել է իշխանութիւն և փառք՝ Ամէն: